



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



ՓԱՍԱԾՏԻՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ  
ԱՌԻԹՈՎ ՄԱՏՈՒՅԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՅՔԻՆ

**ԿՈՐՍԱԿԱՆ ՀԱՅԻՆ ԵՏԵՒԵՆ ՄԻ՛ ԵՐԹԱՔ, ԶԱՆԱՅԷՔ ԱՊԱՅՈՎԵԼ  
 ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ՀԱՅՈՑ, ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԱՏԱԼՈՎ**

*ՊԱՏԳԱՍԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ*

Հայկական Տոնացոյցին համաձայն, Երկուշաբթի, 21 Յունուարին տօնն է, Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետին բառերը փոխ առնելով՝ Ամենասուրբ Երրորդութեան ընտրեալ եւ հաւատարիմ ծառային, քաջ նահատակին, շնորհքներու օթեան արագահաս սուրբին, երկնաւոր Թագաւորի սուրբ զօրապետին, պայծառ արուսեակին, մարդոց ցաւերուն զօրեղ բժիշկին, արտասուքները սրբողին, նեղեալներն ու վշտահարները մխիթարողին՝ Ս. Սարգիս Չօրավարին:

Կիրակի, 20 Յունուարի առաւօտուն, Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցոյ անուանակոչութեան առիթով, եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Թեմիս Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի կողմէ: Ս. Խորանին կը սպասարկէին Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիլիկիեան եւ եկեղեցոյ հովիւ՝ Արժ. Տ. Խորեն Զինյ. Պապոշեան: Եկեղեցին խուռներամ բազմութիւն մը լեցուցած էր: Դպիրներուն ներդաշնակ երգեցողութեամբ, հաւատացեալները իրենք ալ կը մասնակցէին Ս. Պատարագի երգեցողութեան:

Քարոզի պահուն, Առաջնորդ Սրբազան Հայրը նախ փառք եւ գոհութիւն վերառաքեց Աստուծոյ, իր պարգեւած անթիւ բարիքներուն ու անհամար շնորհքներուն համար: Սրբազանը նշեց, որ Փասատինայի հայ գաղութի գաւակները Ս. Սարգիսի անուամբ կնքուած այս եկեղեցին օրէ օր կը շէնցնեն իրենց ներկայութեամբ: Ան յայտնեց, որ մօտիկ ապագային եկեղեցին կ'ունենայ հայկական ճարտարապետութեամբ գմբէթ մը եւ զոյգ զանգակատուներ, որոնք երկնասլաց տեսքին կողքին՝ պիտի խորհրդանշեն մեր աղօթքներն ալ երկինք բարձրացնելու հաւատքը:

Իր քարոզին մէջ, Սրբազանը Հայրը խօսեցաւ «Յիսուս՝ կեանքի հացը» նիւթին շուրջ, բացատրելով, որ հացը որքան կարելոր է մարդուս ֆիզիքական աճման, նոյնքան եւ Կեանքի Հացը՝ Քրիստոս յաւիտենական կեանքին համար: Սրբազանը կոչ ուղղեց բոլոր ներկաներուն, Քրիստոնէական իրենց կեանքը ապրելու Աստուծոյ կամքին համաձայն, իսկ **«Աստուծոյ ուզած գործը այն է, որ հաւատաք Անոր՝ որ Ինք դրկեց»** (Յհ 6.29): Ապա Սրբազանը, Ս. Սարգիս Չօրավարի, անոր որդւոյն՝ Մարտիրոսի եւ 14

զինակիցներուն կեանքին ու քաջարի նահատակութեան մասին, խօսելէ ետք, վեր առաւ անոնց օրինակելի վարքը, կորստական հացին ետեւէն չերթալու անոնց պայքարը, այլ յաւիտենական կեանք պարգեւող Քրիստոս Յացին ետեւէն երթալու անոնց ճիգն ու աշխատանքը: Աւարտին, Առաջնորդ Սրբազանը կոչ ուղղեց բոլորին՝ հետեւելու Ս. Սարգիս Չորավարի կեանքի օրինակին, անվախօրէն դիմադարձելու եւ ո՛չ ըսելու մեր կեանքին դիմաց ցցուող ամէն տեսակի դժուարութեանց, չարին խաբկանքներուն եւ փորձութեանց, մեր յոյսը նիւթին ու հարստութեան վրայ չդնելու, այլ հոգեւոր հարստութեան վրայ, որ է՝ Տիրոջ առաջնորդող ուղին: «Ս. Սարգիս Չորավար Կեանքի Յացին ետեւէն գնաց: Դուք ա, կորստական հացին ետեւէն մի՛ երթաք, ջանացեք ապահովել յաւիտենական Յացը, Յիսուս Քրիստոսի հաւատալով», եզրակացուց Առաջնորդ Սրբազանը:

Պատարագի աւարտին, հոգեհանգիստի պահուն, Առաջնորդ Սրբազանը, իր կողքին ունենալով հոգեւորականաց դասը, կատարեց մատաղի օրինութիւնը, աղօթքին մէջ խնդրելով, որ այս մատաղին ընդմէջէն Ս. Յոգին ի՛նք սրբէ հաւատացեալներուն մեղքերը, բժշկութիւն պարգեւէ բոլոր հաւատացեալներու ցաւերուն, եւ լուսաւորէ հանգուցեալ մեր հարազատներուն հոգիները:

Մատաղօրհնէքի աւարտին, թափօրը յառաջացաւ եկեղեցւոյ գաւիթը, ուր հաւատացեալները մեծ խանդավառութեամբ երգեցին «Կիլիկիա»ն եւ «Ի վեհ բարձանց» հայրապետական մաղթերգը, որմէ ետք ներկաները, եկեղեցիէն մեկնած ժամանակ՝ ստացան մասն ու մատաղը եւ հոգելից ապրումներով վերադարձան իրենց տուները:

## **ՍԻՐՈՅ ՃԱՇ**

Նոյն օրը, կէսօրին, Ս. Սարգիս եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ սիրոյ ճաշ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Յօր, մասնակցութեամբ Յոգեւորականաց դասուն, Յոգաբարձական եւ Տիկնանց կազմերուն, եկեղեցւոյ գլխաւոր բարերար՝ Տէր եւ Տիկին Սարգիս եւ Սիւզան Կիտցիսեան ամուլին եւ անոնց հարազատներուն, հովանաւորներուն եւ եկեղեցւոյ յարակից մարմիններուն ու բարեկամներուն:

Ճաշի ընթացքին շնորհակալական խօսքերով հանդես եկան եկեղեցւոյ հոգեւոր հովիւը, Ազգային Վարչութեան Ատենապետը եւ անդամներ, հոգաբարձութեան ատենապետը, անցեալի եւ ներկայի անդամներ եւ եկեղեցւոյ գլխաւոր բարերարը: Ապա, Առաջնորդ Սրբազան Յայրը գնահատեց Ս. Սարգիս եկեղեցւոյ մեծ ընտանիքը, եւ օրհնեց բոլորին տարած անսակարկ նուիրումն ու ծառայութիւնը: Սրբազան Յօր «Պահպանիչ»ով վերջ գտաւ սիրոյ ճաշը:

DURING DIVINE LITURGY ON THE NAME DAY OF ST. SARKIS CHURCH

**SEEK SPIRITUAL BREAD THAT ENDURES FOR ETERNITY**

*ADVISED THE PRELATE*

On Monday, January 21<sup>st</sup>, the Armenian Church celebrated the Feast of St. Sarkis. This Feast as well as the name day of St. Sarkis Church in Pasadena was celebrated on Sunday, January 20, with Divine Liturgy celebrated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. The Prelate was assisted at the altar by Very Rev. Fr. Barthev Gulumian and parish pastor Rev. Fr. Khoren Babochian.

The Prelate began his sermon by giving thanks to God for His bountiful blessings and announcing that the church would soon be graced with a traditional Armenian dome and belfry. In speaking of Jesus as the Bread of Life, the Prelate asserted that as bread is essential for our physical survival, spiritual bread is just as crucial for attaining eternal life, and urged the faithful to live their lives according to God's will for ***"This is the work of God, that you believe in Him whom He sent"*** (John 6:29).

The Prelate spoke of the exemplary lives of St. Sarkis, his son Mardiros, and their fourteen companions, and their resolve to attain eternal life through Jesus, the Bread of Life. He concluded by advising the faithful to follow the example of St. Sarkis and his companions by seeking spiritual rather than material wealth, and by aspiring to attain eternal life through faith in our Lord Jesus Christ.

During the requiem service, the Prelate blessed the madagh during which he prayed for the Holy Spirit to absolve the sins of the faithful and to bring peace to the souls of our departed.

In the afternoon a reception took place in the church hall with the participation of the clergy members, Board of Trustees and Ladies Auxiliary members, church benefactors Mr. and Mrs. Sarkis and Suzan Kitsinian, and friends. Remarks were offered by the parish Pastor, Board of Trustees Chair, Executive Council Chair, and the benefactor. The Prelate commended the members of the church for their service and closed with the benediction.